ք. Դիլիջան 30.03.2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022Թ. ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ապրիլի 30-ին ժամը 15:00-ին կայացած Դիլիջան համայնքի ղեկավարին կից հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական զարգացման և ներդրումների խրախուսման խորհրդի՝ **նիստերի դահլիճում** տեղի ունեցած նիստին մասնակցում էին, Արթուր Կարապետյանը, Վազգեն Սեդրակյանը, Արման Բազինյանը, Վաչագան Գևորգյանը, Ռոբերտ Ղարաքեշիշյանը:

Նիստից բացակայում էին Արտակ Մարտիրոյանը, Սուրեն Մելիքյանը, Ղազար Ղազարյանը, Սահակ Մկրտումյանը:

Խորհրդին մասնակցում էր Լիպարիտ Սանթրոսյանը (Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար):

Նիստը արձանագրում էր խորհրդի քարտուղար Լամարա Մանթաշյանը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցեր.

1. Արմեն Ֆրանգուլյան՝ ք.Դիլիջան, 1-ին փ., 2, հյուրանոցի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
2. Անահիտ Բերակչյան՝ ք.Դիլիջան, Տ.Պետրոսյան 23, հյուրանոցի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
3. Կարապետ Հայրապետյան՝ ք.Դիլիջան Հակոբջանյան 3/5, թվով երկու բնակելի տների, զրուցարանի ցանկապատի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
4. Հովհաննես Վարդազարյան՝ ք.Դիլիջան, Կամարինի փ.7/1, բնակելի տան և պարսպի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
5. Արմեն Ղազարյան, ք.Դիլիջան, Օրջոնիկիձե 90, բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:

6. Մովսես Պողոսյան՝ ք.Դիլիջան, 1-ին փ.27, բնակելի տան վերակառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
7. «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամ՝ ք.Դիլիջան, Գետափնյա 7, նոր կառուցվող սրճարանի շինարարության թույլտվության դիմում:
8. «Դ-Վենչուրս» ՓԲԸ՝ ք.Դիլիջան, Կամարինի 1–ին նրբ., թիվ 4, բնակելի տան կառուցման շինարարության թույլտվության դիմում:
9. «Դ-Վենչուրս» ՓԲԸ՝-ի ք.Դիլիջան, փ.Կալինինի թիվ 2, օժանդակ կառույցի շինարարության թույլտվության դիմում:
10. Ղուկաս Սանթրոսյանի՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան փ., առևտրի սրահի ավարտական ակտի կամ շահագործման թույլտվության դիմում:

Հարց 1.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներկայացրեց Արմեն Ֆրանգուլյանի՝ ք.Դիլիջան, 1-ին փ., 2, հյուրանոցի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ներկայացված էսքիզային նախագծի փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո խորհրդի անդամները հնչեցին տեսակետ՝ սահմանափակվել վերջին հարկով, հանել դուալլեքսը՝ վերջին հարկի երկհարկանի համարները վերափոխել մեկ հարկի, երկթեք գագաթը հասցնել 15 մետրի:

Տեղի ունեցավ քվեարկություն:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

Արմեն Ֆրանգուլյանի՝ ք.Դիլիջան, 1-ին փ., 2, հյուրանոցի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին

տրամադրել դրական եզրակացություն պայմանով՝ սահմանափակվել վերջին հարկով, հանել դուպլեքսը՝ վերջին հարկի երկհարկանի համարները վերափոխել մեկ հարկի, երկթեք գագաթը հասցնել 15մ:

Հարց 2.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներակայացրեց Անահիտ Բերակչյանի՝ ք.Դիլիջան, Տ.Պետրոսյան 23, հյուրանոցի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Էսքիզային նախագծի ուսումնասիրությունից հետո հնչեցին հարցադրումներ ավտոկայանատեղիների վերաբերյալ: Վ.Սեդրակյանը հնչեցրեց առաջարկ՝ շինությունը կառուցել քոթեջատիպ, կամ սեփական տարածքում ապահովել նվազագույնը 15 ավտոմեքենայի կայանատեղի:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

Էսքիզային նախագծի ուսումնասիրությունից հետո հնչեցին հարցադրումներ ավտոկայանատեղիների վերաբերյալ: Վ.Սեդրակյանը հնչեցրեց առաջարկ՝ շինությունը կառուցել քոթեջատիպ, կամ սեփական տարածքում ապահովել նվազագույնը 15 ավտոմեքենայի կայանատեղի, հաջորդ նիստին ներկայացնել էսքիզային նախագիծ:

Հարց 3.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներակայացրեց Կարապետ Հայրապետյանի՝ ք.Դիլիջան Հակոբջանյան 3/5, թվով երկու բնակելի տների, զրուցարանի ցանկապատի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

Կարապետ Հայրապետյանի՝ ք.Դիլիջան Հակոբջանյան 3/5, թվով երկու բնակելի տների, զրուցարանի ցանկապատի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել **դրական** եզրակացություն:

Հարց 4.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներակայացրեց Հովհաննես Վարդազարյանի՝ ք.Դիլիջան, Կամարինի փ.7/1, բնակելի տան և պարսպի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ուսումնասիրվեց ներկայացված էսքիզային նախագիծը, որն ընդհանուր առմամբ արժանացավ հավանության: Դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց խորհրդի քվեարկությանը:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

Հովհաննես Վարդազարյանի՝ ք.Դիլիջան, Կամարինի փ.7/1, բնակելի տան և պարսպի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Հարց 5.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներակայացրեց Արմեն Ղազարյանի՝ ք.Դիլիջան, Օրջոնիկիձե 90, բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ուսումնասիրվեց էսքիզային նախագիծը:

Հնչեց առաջարկություն՝ հաջորդ նիստին ներկայացնելու նաև առնվազն 20-25 ավտոկայանատեղիների էսքիզային նախագիծ՝ սեփական տարածքում:

Հարց 6.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներկայացրեց Մովսես Պողոսյանի՝ ք.Դիլիջան, 1-ին փ.27, բնակելի տան վերակառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ուսումնասիրվեց ներկայացված էսքիզային նախագիծը:

Տեղի ունեցավ քվեարկություն:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 դեմ՝ 0 ձեռնպահ՝ 0

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Մովսես Պողոսյանի՝ ք.Դիլիջան, 1-ին փ.27, բնակելի տան վերակառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Հարց 7.

Լ.Սանթրոսյանը խորհրդին ներկայացրեց «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի՝ ք.Դիլիջան, Գետափնյա 7, նոր կառուցվող սրճարանի շինարարության թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ուսումնասիրվեց ներկայացված էսքիզային նախագիծը: Դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց խորհրդի քվեարկությանը:

Կողմ՝ 5 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

«Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամի՝ ք.Դիլիջան, Գետափնյա 7, նոր կառուցվող սրճարանի շինարարության թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Հարց 8.

Լ.Սանթրոսյանը խորհրդին ներկայացրեց «Դ-Վենչուրս» ՓԲԸ՝-ի ք.Դիլիջան, Կամարինի 1–ին նրբ., թիվ 4, բնակելի տան կառուցման շինարարության թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ներկայացված էսքիզային նախագիծը արժանացավ հավանության:

Դիմումին դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

«Դ-Վենչուրս» ՓԲԸ՝ ք.Դիլիջան, Կամարինի 1–ին նրբ., թիվ 4, բնակելի տան կառուցման շինարարության թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Հարց 9.

Լ.Սանթրոսյանը խորհրդին ներկայացրեց «Դ-Վենչուրս» ՓԲԸ՝-ի ք.Դիլիջան, փ.Կալինինի թիվ 2, օժանդակ կառույցի շինարարության թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Դիմումին դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 դեմ՝ 0 ձեռնպահ՝ 0

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

«Դ-Վենչուրս» ՓԲԸ՝-ի ք.Դիլիջան, փ.Կալինինի թիվ 2, օժանդակ կառույցի շինարարության թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Հարց 10.

Լ.Սանթրոսյանը խորհրդին ներկայացրեց Ղուկաս Սանթրոսյանի՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան փ., առևտրի սրահի ավարտական ակտի կամ շահագործման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Դիմումին դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 5 դեմ՝ 0 ձեռնպահ՝ 0

1. Արթուր Կարապետյան

2. Վազգեն Սեդրակյան
3. Արման Բազինյան
4. Վաչագան Գևորգյան
5. Ռոբերտ Ղարաքեշիշյան

Խորհուրդը որոշեց.

Ղուկաս Սանթրոսյանի՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան փ., առևտրի սրահի ավարտական ակտի կամ շահագործման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Խորհրդի անդամներ՝
Վազգեն Սեդրակյան
Վաչագան Գևորգյան
Արման Բազինյան
Արտակ Մարտիրոսյան
Ռոբերտ Ղարաքեշիշյան
Ղազար Ղազարյան

Խորհրդի նախագահ՝ Արթուր Կարապետյան
Խորհրդի քարտուղար՝ Լամարա Մանթաշյան

Օրակարգից դուրս քննարկվեցին Դիլիջան խոշորացված համայնքի գլխավոր հատակագծում հնարավոր փոփոխություններ կատարելու մի շարք առաջարկներ:

- Սահմանափակել խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի հատակագծային չափը, առավելագույն բնակելի կառուցապատման 20%-ը դարձնել 40%:
- Գոշավանք տանող ճանապարհի կառուցապատման գոտին լինի 200-500մ հեռավորության վրա:
- Բազմաբնակարան շենքերի կառուցապատումը կատարվի 4+1 հաշվարկով: